

---

---

«ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ  
ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԱՐԲԱՀԱՄՅԱՆ Հ. Մ., ԶՈՀՐԱՔՅԱՆ Է. Լ., ՏԵՏԵՅԱՆ Ա. Ա.

Եվրոպական միությունը (ԵՄ) համաշխարհային քաղաքականության առանցքային դերակատարներից մեկն է, որը ներկայումս միավորում է 28 եվրոպական պետություններ և ընդգրկում է Աստանտյան օվկիանոսից մինչև Սև ծով ընկած տարածքը: Այն իր նյութական, տնտեսական, քաղաքական, քաղաքակրթական, հոգևոր, մշակութային, մարդկային, գիտական ներուժով (ավելի քան կես միլիարդ մարդ, աշխարհի համախառն ներքին արդյունքի 30%) մեծ դեր ունի ժամանակակից աշխարհում կայունության, խաղաղության ապահովման համընդհանուր գործում:

Երկրորդ աշխարհամարտից հետո ձևավորված ԵՄ-ն խորհրդանշում էր երկու համաշխարհային պատերազմների թատերաբեմ դարձած Եվրոպայի վերածնունդը, որը պետք է դառնար կայունության, պետությունների համագործակցության և նոր տիպի գործընկերության հարթակ՝ հիմնված համընդհանուր արժեքների վրա. մարդու իրավունքներ, ժողովրդավարություն, օրենքի գերակայություն, ազատ շուկայական հարաբերությունների ձևավորում և այլն:

ԵՄ-ի դերակատարությունը մեծացավ 1980-1990-ական թվականներին՝ «սոցիալիստական ճամբարի», այնուհետև ԽՍՀՄ-ի փլուզումից հետո: ԽՍՀՄ նախկին, այդ թվում՝ հարավկովկասյան հանրապետությունների՝ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի արտաքին քաղաքականության օրակարգում առանցքային տեղ գրավեց եվրոպական ուղղությունը՝ աշխարհամասի երկրների, ինչպես նաև տարածաշրջանային կառույցների հետ երկկողմանի հարաբերությունների հաստատման և խորացման, սերտ և բազմակողմ համագործակցություն հաստատելու անհրաժեշտությունը:

Ինչպես հայտնի է, ԽՄԿԿ Գլխավոր քարտուղար Մ. Գորբաչովի կողմից ԽՍՀՄ արտաքին հարաբերություններում նոր կուրսի՝ «նոր մտածողության» հռչակումից հետո Խորհրդային Միության և Եվրոպական Համայնքի միջև 1989 թ. ստորագրվեց Առևտրի և տնտեսական համագործակցության վերաբերյալ համաձայնագիր, իսկ 1990 թ. վերջում՝ Եվրոպական խորհուրդը որոշում ընդունեց աջակցել ԽՍՀՄ-ում սկզբնավորված վերափոխումների գործընթացին:

Բելովեժսկի համաձայնագրի ստորագրումից մի քանի օր անց՝ 1991 թ. դեկտեմբերի 16-ին, Բրյուսելում ԵՀ-ի անդամ պետությունների արտաքին գործերի

նախարարների արտահերթ հանդիպման ժամանակ որոշվեց, որ Եվրոպական համայնքը կճանաչի Արևելյան Եվրոպայի և նախկին խորհրդային հանրապետությունների անկախությունն այն դեպքում, եթե վերջիններս կատարեն նախկինում Խորհրդային Միության ստանձնած պարտավորությունները, վավերացնեն և իրականացնեն Եվրոպայում սովորական սպառազինությունների մասին պայմանագրի դրույթները: Դրանից հետո ԵՀ-ն 1991 թ. դեկտեմբերի 31-ին պաշտոնապես ճանաչեց Հարավային Կովկասի, ինչպես նաև նախկին խորհրդային հանրապետությունների անկախությունը:

Եվրոպական Հանձնաժողովի կողմից 1991 թ. հիմնադրվեց ԱՊՀ տեխնիկական աջակցության ծրագիրը՝ SUUFU-ը (TACIS-Technical Assistance to the Commonwealth of Independent States), որն աջակցելու էր նորանկախ հանրապետությունների՝ անցումային շրջանի դժվարությունները հաղթահարելուն և տրամադրելու էր համապատասխան տեխնիկական օժանդակություն: Հետագայում, Հարավային Կովկասի պետություններն ընդգրկվեցին նաև ԵՄ-ի օժանդակության մի շարք այլ ծրագրերում, ինչպիսիք էին Եվրոպական հանձնաժողովի մարդասիրական օգնության գրասենյակը Commission Humanitarian Aid Office (ECHO), Պարենային անվտանգության ծրագիրը (ՊԱՕ), Տեմպուր, Թայեքսը (TAIEX), Թվիննինգը (TWINNING) և այլն:

Տևական բանակցություններից հետո 1996 թ. ապրիլին ԵՄ-ի և Հարավային Կովկասի պետությունների միջև ստորագրվեցին Գործընկերության և համագործակցության համաձայնագրեր (ԳՀՀ):

Իր ամենամեծ ընդլայնմամբ՝ նախաշեմին՝ 2003 թ., ԵՄ-ն մեկնարկեց Նոր հարևանության քաղաքականությունը (ԵՀՔ), որը կոչված էր կարգավորելու ԵՄ-ի հարաբերությունները նոր հարևան պետությունների հետ: Ինչպես հայտնի է, ԵՀՔ շրջանակներում ընդգրկվեցին նաև Հայաստանը, Վրաստանն ու Ադրբեջանը:

ԵՀՔ շրջանակներում ընդգրկվեցին քաղաքակրթական, քաղաքական, տնտեսական, մշակութային և մի շարք այլ չափանիշներով տարաբնույթ տասնվեց երկրներ<sup>2</sup>: ԵՀՔ-ն ուներ աշխարհագրական լայն ընդգրկում՝ Հյուսիսային Աֆրիկա, Մերձավոր Արևելք, Արևելյան Եվրոպա, Հարավային Կովկաս: Այս երկրների

<sup>1</sup> ԵՄ ամենամեծ ընդլայնումը տեղի է ունեցել 2004 թ. մայիսին, երբ Եվրոպական միության անդամ դարձան 10 երկրներ՝ Չեխիան, Կիպրոսը, Լատվիան, Լիտվան, Էստոնիան, Հունգարիան, Մալթան, Լեհաստանը, Սլովենիան և Սլովակիան:

<sup>2</sup> ԵՀՔ շրջանակներում ընդգրկված էին 16 երկրներ, որոնցից 12-ի՝ Մոլդովայի, Ուկրաինայի, Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի, Լիբանանի, Մարոկոյի, Մոնակոյի, Բուրայելի, Պաղեստինի ինքնավարության, Հորդանանի, Եգիպտոսի, Թունիսի հետ ստորագրվել են Գործընկերությունների ծրագրեր (ԳԾ): Գործընկերությունների ծրագրեր չեն ստորագրվել Բելառուսի, Սիրիայի, Լիբիայի հետ: Ալժիրի հետ ԳԾ-ն բանակցային փուլում է: Տե՛ս <http://eeas.europa.eu/enp/about-us/indexen.htm>

նկատմամբ ԵՄ-ի քաղաքականությունը, ինչպես նաև վերջիններիս առաջնահերթությունները Եվրոպական միության հետ հարաբերություններում բավական տարբեր էին: Հետևաբար, այս երկրների ընդգրկումը մեկ քաղաքականության մեջ հանգեցնելու էր մի շարք խնդրահարույց իրողությունների:

Տնական ժամանակ ԵՄ-ում ընթանում էին քննարկումներ ԵՀՔ շրջանակներում հարավային և արևելյան հարևան պետությունների միջև որոշակի տարբերակում և մասնավորեցում մտցնելու հարցի շուրջ: Իհարկե, դա միայն աշխարհագրական տարբերակում չէր: Այստեղ մեծ դեր ունեին նաև այս երկրների միջև առկա քաղաքական, տնտեսական տարբերությունները: Սակայն ԵՄ անդամ երկրների միջև անհամաձայնություն կար նշված տարածաշրջաններից որևէ մեկին առաջնություն տալու խնդրում: Արևելյան հարևանների շահերը պաշտպանում էին Գերմանիան, Մեծ Բրիտանիան, Լեհաստանը, Հունգարիան, իսկ հարավային հարևաններին առաջնություն տալու կողմնակիցներն էին Ֆրանսիան, Իտալիան, Բուլղարիան<sup>3</sup>:

Վերջապես, 2008 թ. հուլիսի 13-ին Փարիզում ԵՄ-ի և Միջերկրածովյան ավազանի երկրների ղեկավարների մասնակցությամբ կայացած գագաթնաժողովում հիմք դրվեց Միջերկրածովյան միությանը (Union for the Mediterranean)<sup>4</sup>: Մի քանի ամիս անց՝ Լեհաստանի և Շվեդիայի արտգործնախարարների՝ Ռ. Միկոլոսկու և Կ. Բիլդտի կողմից ներկայացվեց Արևելյան գործընկերության (ԱԷԳ) նախագիծը, որը պետք է ընդգրկեր վեց երկրներ՝ Ուկրաինան, Մոլդովան, Բելառուսը, Վրաստանը, Ադրբեյջանը և Հայաստանը: Նախագիծը սկզբնապես քննադատաբար ընդունեց Գերմանիան: Այս հարցի շուրջ Գերմանիայի և Լեհաստանի արտաքին գործերի նախարարների՝ Ֆ. Վ. Շտայնմայերի և Ռ. Միկոլոսկու միջև 2008 թ. ապրիլին տեղի ունեցան խորհրդակցություններ: Գերմանիայի վերապահումները վերաբերում էին Արևելյան գործընկերության (ԱԷԳ) և Ռուսաստանի հարաբերություններին: Պատահական չէր, որ Գերմանիան բազմիցս հանդես էր գալիս Արևելյան գործընկերությանը Ռուսաստանի և Թուրքիայի մասնակցության պաշտպանությամբ<sup>5</sup>:

Ի վերջո, 2008 թ. հունիսին նախաձեռնությունը հավանության արժանացավ Եվրոպական խորհրդի կողմից, իսկ նույն թվականի սեպտեմբերին Բրյուսելում կայացած Եվրոպական խորհրդի արտահերթ նիստը, հաշվի առնելով ռուս-վրացական հակամարտությունից հետո ստեղծված իրավիճակը,

<sup>3</sup> Sk' u Федорцев В. А. Восточное направление европейской политики соседства: особенности становления и развития (Проблемы национальной стратегии, 2012, N 2, (11), с. 32).

<sup>4</sup> Sk' u Европейский Союз: факты и комментарии, выпуск 53: июль-сентябрь, 2008, с. 43:

<sup>5</sup> Sk' u Федорцев В. А., նշվ. աշխ., էջ 38:

առանձնահատուկ ընդգծեց «Սև-ծովյան սիներգիա» և «Արևելյան գործընկերություն» նախաձեռնությունները և դրանց ակտիվացման ուղղությամբ քայլեր նախաձեռնելու անհրաժեշտությունը<sup>6</sup>:

Այս երկու նախաձեռնությունների դեպքում էլ առաջ եկան համակողմանի պատասխաններ ակնկալող մի շարք հարցադրումներ: Խնդիրն այն էր, որ ինչպես նշում էր Մեծ Բրիտանիայի ներկայացուցիչ Չ. Թաննոքը, Արևելյան գործընկերության հեղինակները փորձում էին գործընկեր վեց երկրները ներկայացնել իբրև տարածաշրջան, մինչդեռ ԱլԳ երկրները առավել շահագրգռված են ԵՄ-ի հետ երկկողմանի հարաբերությունները խորացնելու հարցում<sup>7</sup>: Ընդ որում, նրանցից յուրաքանչյուրը ԵՄ-ի հետ հարաբերություններում ինչպես նախկինում, այնպես էլ ներկայումս ունի իր առաջնահերթություններն ու գերակայությունները: Օրինակ, Մոլդովայի և Ուկրաինայի համար ԱլԳ-ն, ինչպես ժամանակին ԵՀԲ-ն, դիտարկվում էր իբրև ԵՄ-ին անդամակցության այլընտրանք<sup>8</sup>, որը չէր համապատասխանում այս երկրների ինչպես իշխանությունների, այնպես էլ հասարակության մեծ մասի ակնկալիքներին: Այս մտայնությունը մասամբ կարող էր վերաբերել նաև Վրաստանին: Անպատասխան մնացած այս հարցերն ու հետագայում առաջացած խնդիրները խճճեցին և բարդացրին ինչպես ԵՄ-ի և ԱլԳ գործընկեր երկրների, այնպես էլ վերջիններիս և այլ պետությունների միջև հարաբերությունները: Պետք է նշել, որ Հայաստանի դիրքորոշումներն ու մոտեցումները բավական հավասարակշռված և արդարացված էին: Հայաստանյան իշխանությունները, մշտապես շեշտելով ԵՄ-ի հետ համակողմանի համագործակցության կարևորությունն ու անհրաժեշտությունը և այդ ուղղությամբ գործնական քայլեր կատարելով, միաժամանակ պահպանում և խորացնում էին Ռուսաստանի Դաշնության հետ ռազմավարական գործընկերությունը:

Արևելյան գործընկերության գլխավոր նպատակն էր, հիմնվելով գոյություն ունեցող երկկողմ կառուցողական հարաբերությունների վրա, անհրաժեշտ պայմաններ ստեղծել ԵՄ-ի և գործընկեր երկրների միջև քաղաքական ասոցիացման և տնտեսական ինտեգրման հետագա խորացման համար<sup>9</sup>: Բանակցությունները պետք է մեկնարկեին ԱլԳ գործընկեր երկրների և ԵՄ-ի միջև Ասոցիացման

<sup>6</sup> St u Европейский Союз: факты и комментарии, выпуск 53: июль- сентябрь, 2008, с. 10:

<sup>7</sup> St u Прегседательство Латвии в ЕС— 2015 u Вос2 очное пар2 нерс2 во. Вмес2 о ули вмес2 е с Россией. Аналу2 уческуй гоклаг, <http://mgimo.ru/up load/iblock/0ec/0ecff7b99a4488a8260ff42cb75e62fa.pdf>

<sup>8</sup> Շատ փորձագետներ ԵՀԲ-ն ներկայացնում էին իբրև ԵՄ անդամակցության այլընտրանք՝ հիմնվելով Եվրոպական Հանձնաժողովի նախագահ Ռ. Պրոդիի հայտնի մեկնաբանության վրա, համաձայն որի՝ ԵՀԲ-ն նշանակում էր «ամեն ինչ, բացի անդամակցություն կառույցների»:

<sup>9</sup> St u Joint Declaration of the Prague Eastern Partnership Summit, Prague, 7 May 2009, Brussels, 8435/09 (Presse 78), p. 6:

(Association Agreements) և դրա մասը կազմող Խոր և համապարփակ ազատ առևտրի գոտու վերաբերյալ համաձայնագրերի (Deep and Comprehensive Free Trade Areas) շուրջ: ԱլԳ կարևոր ուղղություններից մեկն էլ քաղաքացիների ազատ տեղաշարժի և վիզա-ների ազատականացման խնդիրն էր: Այն պետք է ապահովեր շարժունակությունը գործընկեր երկրների միջև՝ վիզաների դյուրացման և հետհանձնման (ռեադմիսիայի) վերաբերյալ համաձայնագրերի ստորագրման միջոցով՝ համաձայն ԵՄ-ի Միգրացիայի վերաբերյալ գլոբալ մոտեցման (Global Approach to Migration)<sup>10</sup>:

ԱլԳ շրջանակներում ԵՄ-ն դեկավարվելու էր պայմանականության և տարբերակման (դիֆերենցիալության) սկզբունքներով<sup>11</sup>: Այսինքն՝ գործելու էր «ավելին՝ ավելիի դիմաց» հայտնի բանաձևը՝ ավելի շատ բարեփոխումներ, առավել մեծ աջակցություն ԵՄ-ի կողմից: Սակայն, ինչպես նշում են մի շարք փորձագետներ, ԵՄ-ի քաղաքական պայմանականության սկզբունքի կիրառումը ԱլԳ դեպքում արդյունավետ չէր: Այն դրական նշանակություն էր ունեցել ԵՄ-ին Արևելյան և Կենտրոնական Եվրոպայի երկրների անդամակցության ժամանակ, քանի որ վերջիններս ունեին ԵՄ անդամ դառնալու հեռանկար, որը լուրջ խթան էր այս երկրների համար բարեփոխումները քաղաքական, տնտեսական, մարդու իրա-վունքների պաշտպանության ոլորտում հետևողականորեն շարունակելու համար: Մինչդեռ ԱլԳ գործընկեր երկրներից որևէ մեկին տրված չէր այս հեռանկարը, որի հետևանքով առաջ էր գալիս մոտիվացիոն ճգնաժամ<sup>12</sup>: Այսինքն՝ այն ինչն առաջարկում էր ԵՄ-ն, չէր կարող բավարար դրդապատճառ լինել այս երկրների համար եվրոպական ուղղության խորացման համար: Պետք է նշել նաև, որ ԵՄ-ն ևս երբեմն այս կամ այն խնդրի վերաբերյալ չէր տալիս իրական և անաչառ գնահատականներ:

Չեխիայի մայրաքաղաք Պրահայում 2009 թ. մայիսին տեղի ունեցավ ԱլԳ առաջին գագաթնաժողովը<sup>13</sup>: Գագաթնաժողովում ընդունված համատեղ հռչակագրում մեծ տեղ էր հատկացվում ԱլԳ գործընկեր երկրների միջև հարաբերությունների խորացման խնդրին: Այսինքն, բացի ԵՄ-ի և վերոնշյալ վեց երկրների միջև հարաբերությունների սերտացման խնդրից, ԱլԳ-ն նպատակ ուներ ստեղծել նախադրյալներ վերոնշյալ վեց երկրների միջև կապերի խորացման

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 7:

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 5:

<sup>12</sup> Տե՛ս **Федорцев В. А.**, նշվ. աշխ., էջ 42:

<sup>13</sup> ԱլԳ գագաթնաժողովները տեղի են ունենում երկու տարին մեկ անգամ: Մինչ օրս տեղի են ունեցել չորս գագաթնաժողովներ՝ 2009 թ. մայիսի 7-ին՝ Պրահայում, 2011 թ. սեպտեմբերի 29-30-ը՝ Վարշավայում, 2013 թ. նոյեմբերի 28-29-ը՝ Վիլնյուսում, 2015 թ. մայիսի 21-22-ը՝ Ռիգայում:

ու ամրապնդման համար: Պետք է նշել, որ ԵՄ-ի և ԱլԳ երկրների միջև երկկողմանի հարաբերությունները խորացան՝ անցնելով համագործակցության որակական և բովանդակային առումով նոր փուլ, որն առաջին հերթին պայմանավորված էր մի շարք փաստաթղթերի և համաձայնագրերի ստորագրմամբ: Ինչպես հայտնի է, 2014 թ. հունիսին ստորագրվեցին Ասոցացման համաձայնագրեր Մոլդովայի, Վրաստանի և Ուկրաինայի հետ: Հայաստանի անդամակցությունը Մաքսային միությանը, իսկ 2015 թ.՝ Եվրասիական տնտեսական միությանը, նոր իրողություններ բացեց ԵՄ-Հայաստան հարաբերություններում: Սակայն, ինչպես նշվում էր Վիլնյուսյան գագաթնաժողովում ընդունված ԵՄ-ի և Հայաստանի համատեղ հայտարարության մեջ, կողմերը պետք է շարունակեին համագործակցությունը ժողովրդավարության, դատական համակարգի բարելավման ուղղությամբ, ինչպես նաև մարդու իրավունքների պաշտպանության, օրենքի գերակայության, կոռուպցիայի դեմ պայքարի և այլ խնդիրների շուրջ<sup>14</sup>: 2015 թ. դեկտեմբերին մեկնարկեցին բանակցությունները ԵՄ-Հայաստան նոր համաձայնագրի շուրջ, որը պետք է փոխարիներ 1996 թ. ստորագրված՝ Գործընկերության և համագործակցության համաձայնագրին: «Շարժունակության շուրջ գործընկերության», ինչպես նաև Վիզաների դյուրացման և հետհանձնման մասին համաձայնագրեր ստորագրվեցին Վրաստանի, Հայաստանի (2011 թ. հոկտեմբերի 27-ին Լյուքսեմբուրգում ստորագրվեց Հայաստան-ԵՄ «Շարժունակության շուրջ գործընկերություն» համատեղ հռչակագիրը, 2012 թ. դեկտեմբերի 17-ին՝ Վիզաների դյուրացման, իսկ 2013 թ. ապրիլի 19-ին՝ հետընդունման համաձայնագրերը), Ադրբեջանի, Ուկրաինայի և Մոլդովայի հետ: 2014 թ. մեկնարկեցին Բելառուսի հետ վիզաների դյուրացման և հետհանձնման, իսկ 2015 թ.՝ «Շարժունակության շուրջ գործընկերության» վերաբերյալ համաձայնագրերի շուրջ բանակցությունները<sup>15</sup>:

ԱլԳ երկրները համագործակցություն հաստատեցին ԵՄ-ի տարբեր գործակալությունների հետ՝ Հայաստանն ու Մոլդովան Եվրոպական ավիացիայի անվտանգության գործակալության (European Aviation Safety Agency (EASA), Վրաստանն ու Մոլդովան՝ Եվրոպական ոստիկանական քոլեջի (European Police

<sup>14</sup> St' u Joint Statement between the European Union and the Republic of Armenia as Agreed by High Representative Catherine Ashton and Foreign Minister Edward Nalbandian (Vilnius, 29 November, 2013) [http://eeas.europa.eu/statements/docs/2013/131129\\_03\\_en.pdf](http://eeas.europa.eu/statements/docs/2013/131129_03_en.pdf)

<sup>15</sup> St' u Mobility Partnerships, visa Facilitation and Readmission Agreements [http://ec.europa.eu/dgs/home-affairs/what-we-do/policies/international-affairs/eastern-partnership/mobility-partnerships-visa-facilitation-and-readmission-agreements/index\\_en.htm](http://ec.europa.eu/dgs/home-affairs/what-we-do/policies/international-affairs/eastern-partnership/mobility-partnerships-visa-facilitation-and-readmission-agreements/index_en.htm)

College (CEPOL), Մոլդովյան Թմրամիջոցների և թմրամոլորանքների մոնիտորինգի եվրոպական կենտրոնի (European Monitoring Centre for Drugs and Drug Addiction (EMCDDA)), Խարդախության դեմ պայքարի եվրոպական գրասենյակի (European Anti-Fraud Office (OLAF)), Հայաստանը, Վրաստանն ու Ադրբեջանը Ֆրոնտեքսի (Frontex) հետ<sup>16</sup>:

Համագործակցությունը խորացվեց օրենսդրական, դատաիրավական համակարգի բարեփոխումների, ժողովրդավարության, մարդու իրավունքների պաշտպանության և այլ ոլորտներում: Լուրջ ուշադրություն էր հատկացվում տնտեսությանն ու ֆինանսական ոլորտին: Պատահական չէր, որ ԱԳ գազաթնաժողովներին մասնակցում էին նաև Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (ՎԶԵԲ) և Եվրոպական ներդրումային բանկի (ԵՆԴ) ներկայացուցիչները: Հատկապես կարևորվում էր փոքր և միջին ձեռնարկատիրության (ՓՄՁ) ոլորտը, որին մեծ աջակցություն էր խոստանում ԵՄ-ի ՓՄՁ մրցունակությանն ու կայունությանը նպաստող COSME (Competitiveness of Enterprises and Small and Mediumsized Enterprises) ծրագիրը: 2015 թ. դեկտեմբերի 10-ին ստորագրվեց ԵՄ-ի և Հայաստանի միջև այս ծրագրին միանալու վերաբերյալ համաձայնագիր<sup>17</sup>: Այն աջակցելու էր ձեռնարկատիրական գործունեության մեջ կանանց մասնակցությանը, ընկերությունների վարչական բեռի նվազմանը և այլ խնդիրների իրագործմանը<sup>18</sup>:

Շարունակվեցին գյուղատնտեսության ոլորտում իրականացվող ծրագրերը՝ Եվրոպական հարևանության ծրագրի Գյուղատնտեսության և գյուղական վայրերի զարգացման նախաձեռնության շրջանակներում (European Neighbourhood Programme for Agriculture & Rural Development initiative (ENPARD)): Առանձնահատուկ ուշադրություն հատկացվեց կրթության, զիտության, մշակույթի ոլորտում ԵՄ-ի հետ համագործակցությանը՝ վերջինիս կրթական, հետազոտական, մշակութային ծրագրերի շրջանակներում, ինչպիսիք էին «Էրազմուս Մունդուս», «Մարի Կյուրի-Սկլոդովսկայա», «Հորիզոն 2020», «Ստեղծարար Եվրոպա» և այլն<sup>19</sup>:

Սակայն, ինչպես նշեցինք, ԱԳ-ն կոչված էր ընդլայնել տարածաշրջանային համագործակցությունը մասնակից երկրների միջև: Նշենք, որ Լեհաստանում

<sup>16</sup> *St' u Joint Declaration of the Eastern Partnership Summit, Vilnius, 28-29 November, 2013, Eastern Partnership: the Way ahead, 17130/13 (PR. en) PRESSE 516, p. 12:*

<sup>17</sup> Հայաստանը ԱԳ երկրներից երկրորդն էր, Մոլդովայից հետո, որը միացավ այս ծրագրին:

<sup>18</sup> *St' u Հայաստանը միանում է ՓՄՁ մրցունակության և կայունության բարձրացմանն ուղղված ԵՄ COSME ծրագրին <http://news.am/arm/news/301274.html>*

<sup>19</sup> *St' u Joint Declaration of the Eastern Partnership Summit, Vilnius, 28-29 November, 2013, p. 5:*

նույնիսկ ակտիվ աշխատանքներ էին տարվում Արևելյան գործընկերության երկրների համար ռուսերեն լեզվով տեղեկատվական հեռուստաալիք ստեղծելու համար: Լեհաստանի արտաքին գործերի նախարարությունը 2015 թ. հեռուստաալիքի ֆինանսավորման համար տրամադրել էր մոտ 1 մլն եվրո: Այս ուղղությամբ ԵՄ անդամ երկրների միջև սկսվել էին խորհրդակցություններ<sup>20</sup>:

ԱլԳ երկրների միջև համագործակցության խորացման համար Եվրոպական Հանձնաժողովը կազմակերպեց չորս թեմատիկ պլատֆորմներ, որոնց շուրջ պետք է տեղի ունենային ազատ և բաց քննարկումներ: Դրանք էին՝

- Ժողովրդավարություն, լավ կառավարում և կայունություն
- տնտեսական ինտեգրացիա
- էներգետիկ անվտանգություն
- մարդկանց միջև շփումների խթանում<sup>21</sup>:

ԵՄ-ն փորձում էր իրականացնել բազմակողմ ծրագրեր, խրախուսել այս երկրների միջև փոխհարաբերությունները: Սակայն նրանց միջև հարաբերությունների առկա վիճակը, ինչպես նաև նախկինում տարածաշրջանային համագործակցություն հաստատելու փորձերը լայն հեռանկարներ չէին խոստանում: Հայտնի է, որ ինչպես Ռուսաստանի, այնպես էլ եվրոպական կառույցների կողմից ստեղծված այս երկրները միավորող տարածաշրջանային կառույցները լուրջ հաջողություններ չէին ունեցել, ինչպես օրինակ, 1997 թ. հիմնադրված ՎՈՒՈՒԱՄ-ը (Վրաստան, Ուկրաինա, Ուզբեկստան, Մոլդովա, Ադրբեյջան), որն այդպես էլ ծանրակշիռ գործոն չդարձավ: Սպասված արդյունքները չունեցան նաև Հարավային Կովկասում եվրոպական կառույցների քաղաքական, տնտեսական, մշակութային, կրթական, զբոսաշրջության ոլորտներում նախաձեռնած համագործակցության ծրագրերը<sup>22</sup>:

Ինչպես արդեն նշեցինք, ԱլԳ շրջանակներում առանձնացվել էին չորս պլատֆորմներ, որոնց շուրջ առաջին հանդիպումները տեղի ունեցան 2009 թ. հունիսին: Այս պլատֆորմների շուրջ համագործակցությունն ուներ իր դրական կողմերը: Միննույն ժամանակ ակնհայտ էր, որ այս երկրների միջև առկա խնդիրները լուրջ խոչընդոտ էին դառնալու դրանց շրջանակներում իրականացվող քայլերի համար: Այս երկրների իշխանություններն ունեին ժողովրդավարության,

<sup>20</sup> Ст' у Европейский Союз: факты и комментарии, Выпуск 78: октябрь-ноябрь, 2014, с. 34:

<sup>21</sup> Ст' у Joint Declaration of the Prague Eastern Partnership Summit, Prague, 7 May 2009, Brussels, p. 9:

<sup>22</sup> Առավել մանրամասն տե՛ս Տեոդոսյան Ա., Եվրոպական կառույցները և Հարավային Կովկասում տարածաշրջանային համագործակցության նախաձեռնությունները 1998-2005 թթ., «Ակունք» գիտական հոդվածների ժողովածու, թիվ 2 (11), 2015, էջ 52-60:



մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ իրենց պատկերացումները, ներքին խնդիրների լուծման յուրահաստուկ մոտեցումները, հետևաբար այս ոլորտում համագործակցության եզրեր գտնելը բարդ խնդիր էր: Պետք է նշել, որ բավական սահմանափակ էին տնտեսական համագործակցության հնարավորությունները, քանի որ նրանց միջև առկա առևտրատնտեսական կապերն աչքի չէին ընկնում խորությամբ և բազմակողմանիությամբ: Էներգետիկ համագործակցության հեռանկարներն էլ հստակ չէին. ինչպես հայտնի է, գործող, այնպես էլ քննարկման փուլում գտնվող խողովակատարերը և տարանցման ուղիները չէին ընդգրկում բոլոր մասնակից երկրներին: Ընդգծելով Ադրբեյջանի կարևոր դերը Եվրոպայի էներգետիկ պաշարների դիվերսիֆիկացման գործում՝ ԵՄ-ն մեծ կարևորություն էր տալիս Հարավային գազային միջանցքին (Southern Gas Corridor), ներառյալ Հարավկովկասյան նավթամուղի (South Caucasus Pipeline (SCP) մոդեռնիզացիային, Տրանս-Ադրիատիկ գազամուղին (Trans-Adriatic Pipeline TAP) և Կասպյան տարածաշրջանը ԵՄ-ի հետ կապող ենթակառուցվածքների զարգացմանը<sup>23</sup>:

Բացի այդ, էներգետիկ համագործակցության խնդիրն անհնար էր իրականացնել առանց Ռուսաստանի հետ համաձայնության: Դեռևս 2000 թ. հոկտեմբերին Փարիզում կայացած ԵՄ-Ռուսաստան գազաթնաժողովում որոշում էր կայացվել պարբերաբար անցկացնել էներգետիկ ոլորտում երկխոսություն, որի ընթացքում պետք է քննարկվեին երկուստեք կարևորություն ներկայացնող բոլոր հարցերը<sup>24</sup>: Էներգետիկ ոլորտում լուրջ ճգնաժամ առաջացավ 2009 թ., երբ Ռուսաստանի և Ուկրաինայի միջև տեղի ունեցած գազային հակամարտության հետևանքով 35 տարվա մեջ առաջին անգամ երեք շաբաթով ընդհատվեց ռուսական (նախկին խորհրդային) գազի մատակարարումը եվրոպական սպառող երկրներ: Մոսկվայի և Կիևի հակամարտությունը առնչվեց Եվրոպայի 18 երկրների, որոնցից մի քանիստում նույնիսկ ընդհատվեց ջեռուցումը և հաստատությունների գործունեությունը<sup>25</sup>: Այս բոլոր իրողությունները խոսում են այն մասին, որ չորս պլատֆորմների շուրջ համագործակցությունը կապված էր լուրջ դժվարությունների հետ:

Ինչպես ԵՄ-ի, այնպես էլ ԱլԳ երկրների միջև համագործակցության խորացմանը պետք է նպաստեին Եվրանեսթ խորհրդարանական վեհաժողովը (ENP-EAST Parliamentary Assembly EURONEST PA) և Տեղական ու տարածքային

<sup>23</sup> See Joint Declaration of the Eastern Partnership Summit, Vilnius, 28-29 November, 2013, p. 10:

<sup>24</sup> See «Европейская интеграция, под ред. О. Буториной, М., 2011, с. 593:

<sup>25</sup> See «Кавешников Н. Актуальный комментарий: газовый кризис и отношения России и ЕС, Европейский Союз: факты и комментарии, выпуск 54: октябрь-декабрь, 2008, с. 4:

իշխանությունների կոնգրեսը: Հարևանության քաղաքականության շրջանակներում միջխորհրդարանական ֆորում ստեղծելու գաղափարը Եվրոպական խորհրդարանում առաջ էր եկել 2006 թ.: Այն պետք է խթաներ բազմակողմ խորհրդարանական երկխոսությունը, նպաստեր մարդկանց միջև կապերի ընդլայնմանը, ԵՄ արժեքների տարածմանը: 2008 թ. հունիսին Եվրոպական խորհրդարանը կազմակերպեց ԵՀՔ արևելյան երկրների խորհրդարանական ներկայացուցիչների մասնակցությամբ կոնֆերանս: Բելառուսի մասնակցության և կանոնադրության վերաբերյալ երկարատև քննարկումներից հետո՝ 2011 թ. մայիսի 3-ին, Բրյուսելում հիմնադրվեց Եվրանեսթ խորհրդարանական վեհաժողովը՝ Եվրախորհրդարանի և ԱլԳ մասնակից հինգ երկրների՝ Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Ուկրաինա, Մոլդովա խորհրդարանների ներկայացուցիչների մասնակցությամբ: Ինչպես նշում էր Քեթրին Էշթոնը Եվրանեսթ խորհրդարանական վեհաժողովի մասնակիցներին ուղղված իր բացման խոսքում, ԱլԳ-ն ոչ միայն կառավարությունների գործընկերություն է, այն նաև համագործակցություն է մարդկանց և նրանց ներկայացնող խորհրդարանների միջև<sup>26</sup>: Մինչ օրս տեղի են ունեցել «Եվրանեսթ» խորհրդարանական վեհաժողովի չորս լիազույցումար նիստեր. 2011 թ. սեպտեմբերին՝ Ստրասբուրգում, 2012 թ. ապրիլի 4-5-ը՝ Բաքվում, 2013 թ. 28-29 մայիսին՝ Բրյուսելում, 2015 թ. մարտի 16-18-ը Երևանում<sup>27</sup>: Սակայն, ինչպես արդեն նշել ենք, Ադրբեջանի իշխանությունների գործողությունները լուրջ խնդիրներ էին ստեղծում նաև այս կառույցի շրջանակներում: Մասնավորապես 2012 թ. Բաքվում կայացած Եվրանեսթի երկրորդ լիազույցումար նիստի բացման խոսքում Ադրբեջանի նախագահ Ի. Ալիևը հայերին «ֆաշիստներ», «օկուպանտներ» անվանեց, որից հետո, ինչպես նշում էր ՀՀ պատվիրակության ղեկավար Վահան Հովհաննիսյանը, ոչ միայն եվրոպացի պատգամավորները, այլև ադրբեջանցի խորհրդարանականները մոտեցել և ներողություն են խնդրել<sup>28</sup>: Վեհաժողովի մասնակիցներին ուղղված հայկական պատվիրակության բողոքում նշվում էր, որ նման հայտարարությունները կարող են ոչնչացնել փոխըմբռնման, համագործակցության ոգին, որը ձեռք է բերվել բազում խնդիրներ հաղթահարելով<sup>29</sup>:

<sup>26</sup> See Address of HR/VP Catherine Ashton to the First meeting of EURONEST, European Parliament, Brussels, 3 May 2011. <http://www.euronest.europarl.europa.eu/euronest/webdav/site/mySite/shared/Written%20address%20of%20HRVP%20ASHTON.pdf>

<sup>27</sup> See «Եվրանեսթ» խորհրդարանական վեհաժողովի կայք էջ <http://www.euronest.europarl.europa.eu/euronest/cms/cache/offonce/home/pid/20>

<sup>28</sup> See Ադրբեջանական հյուրընկալություն [http://www.hhpress.am/index.php?\\_sub=hodv&hodv=20120406\\_28&flag=am](http://www.hhpress.am/index.php?_sub=hodv&hodv=20120406_28&flag=am)

<sup>29</sup> Նույն տեղում:

Պետք է նշել, որ համախմբվածության յուրօրինակ դրսևորում դարձավ Երևանում կայացած Եվրանեսթ Խորհրդարանական վեհաժողովի նիստի կողմից 2015 թ. մարտի 17-ին Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի նախօրեին ընդունված Բանաձևը Հայոց ցեղասպանության կամ ցեղասպանության դատապարտման վերաբերյալ, որտեղ Թուրքիային կոչ էր արվում առերեսվել սեփական պատմության հետ<sup>30</sup>:

Արևելյան Գործընկերության տարածքային և տեղական իշխանությունների կոնֆերանսը (Conference of the Regional and Local Authorities for the Eastern Partnership (CORLEAP) ԱլԳ վեց երկրներ ներկայացնող տեղական իշխանությունների 36 ներկայացուցիչների մասնակցությամբ մեկնարկեց Լեհաստանի Պոզնան քաղաքում 2011 թ. սեպտեմբերի 8-ին: Կոնֆերանսի նպատակն էր ԱլԳ շրջանակներում լսելի դարձնել տեղական իշխանությունների ձայնը<sup>31</sup>: Մեկ տարի անց՝ 2012 թ., Մոլդովայի մայրաքաղաք Քիշնևում կայացավ Արևելյան Գործընկերության Տեղական և տարածքային իշխանությունների կոնֆերանսի առաջին հանդիպումը: Այստեղ ընդգծվեցին մի քանի խնդիրներ, որոնք խոչընդոտում կամ դանդաղեցնում էին տեղական և տարածքային իշխանությունների զարգացումը՝ ֆինանսական ինքնավարության պակաս, հարկային սահմանափակ հնարավորություններ, հանրային կառավարման բարեփոխումների անհրաժեշտություն, փորձի փոխանակում, ԵՄ-ի հետ հետագա համագործակցության խորացում և այլն<sup>32</sup>:

2015 թ. սեպտեմբերի 18-ին Երևանում կայացավ Արևելյան գործընկերության անդամ երկրների տեղական և տարածքային իշխանության մարմինների խորհրդաժողովի՝ CORLEAP-ի բյուրոյի հանդիպումը: Ելույթ ունենալով այդ հանդիպման ժամանակ ՀՀ արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը նշում էր, որ Կովկասում տարածաշրջանային համագործակցությանը խոչընդոտում են Ադրբեջանը և Թուրքիան: Մինչդեռ Հայաստանի և Վրաստանի միջև առկա է այս ոլորտում արդյունավետ համագործակցություն. մասնավորապես 2009 թ. իրագործվում է «Եվրոկովկաս» նախագիծը<sup>33</sup>, որը պետք է խթանի միջսահմանային

<sup>30</sup>Տե՛ս Եվրանեսթ ԽԿ-ն Հայոց ցեղասպանության վերաբերյալ բանաձև է ընդունել <http://news.am/arm/news/257511.html>

<sup>31</sup> EU mayors and regional politicians launch dialogue with partners in the Eastern neighbourhood, <http://cor.europa.eu/en/news/pr/Pages/regional-politicians-partners-eastern-neighbourhood.aspx>

<sup>32</sup> Conference of the Regional and Local Authorities for the Eastern Partnership (CORLEAP), History <http://cor.europa.eu/en/activities/corleap/Pages/history.aspx>

<sup>33</sup> ԵվրոԿովկասը հիմնադրվել է 2009 թ. Հայաստանի և Վրաստանի տեղական իշխանությունների մարմինների կողմից, որում միավորված են Վրաստանի չորս մունիցիպալիտետներ՝ Նինոծմինդա, Դմանիս, Բոլնիս, Մառնեդու և Հայաստանի երեք մարզերի՝ Լոռի, Տավուշ, Շիրակ, համայնքներ: Այս անդրսահմանային

համագործակցությունը և հնարավորությունները ընձեռի տեղական իշխանություններին ուղիներ փնտրել ընդհանուր տարածաշրջանային տնտեսական և սոցիալական խնդիրների լուծման համար<sup>34</sup>:

ԵՀՔ մասնակից հարավային երկրներում 2011 թ. տեղ գտած իրադարձություններից հետո մեծ կարևորություն ստացան ԱլԳ շրջանակներում քաղաքացիական հասարակության մասնակցությանն ուղղված ծրագրերը: Նշվում էր, որ կայացած քաղաքացիական հասարակությունը կարող էր մեծ դեր խաղալ ԱլԳ սկզբունքների կենսագործման ընթացքում<sup>35</sup>: Այդ նպատակով ԱլԳ շրջանակներում ստեղծվեց Արևելյան գործընկերության Քաղաքացիական հասարակության ֆորումը (Eastern Partnership Civil Society Forum (EaP CSF)): 2009 թ. նոյեմբերի 16-17-ը Բրյուսելում կայացավ Քաղաքացիական հասարակության ֆորումի առաջին ժողովը: Ամենամյա ֆորումները, Մշտական կոմիտեն, ֆորումի շրջանակներում ստեղծված հինգ աշխատանքային խմբերը, ազգային պլատֆորմները պետք է նպաստեին քաղաքացիական հասարակության դերի բարձրացմանն ու որոշումների ընդունման գործում ակտիվ մասնակցությանը: Ամենամյա ֆորումներին մասնակցում են Արևելյան գործընկեր երկրները և ԵՄ-ն ներկայացնող մոտ 200 ներկայացուցիչներ<sup>36</sup>:

Սակայն ԱլԳ վեց երկրներում քաղաքացիական հասարակությունը կայացման փուլում էր կամ առհասարակ ձևավորված չէր: Բավական է հիշատակել Ադրբեջանում մամուլի և մարդու իրավունքների խնդիրները, որոնք բազմիցս քննադատության են ենթարկվել ԵՄ-ի և եվրոպական, ինչպես նաև միջազգային կառույցների կողմից: Այս խնդիրներն ավելի լայնորեն բարձրաձայնվեցին և համաշխարհային մամուլի կողմից լուսաբանվեցին 2015 թ. ամռանը Բաքվում կայացած Եվրոպական առաջին օլիմպիական խաղերի նախօրեին և ընթացքում, երբ նույնիսկ եվրոպական շատ լրագրողներ և մարդու իրավունքների պաշտպանների չտրվեց Ադրբեջանի մուտքի արտոնագիր: Միջազգային կառույցների կողմից քննադատություններն էին պատճառը, որ Ադրբեջանի նախագահը չմասնակցեց 2015 թ. մայիսին կայացած ԱլԳ Ռիգայի գագաթնաժողովին: Թեև վերջինիս բացակայությունը պաշտոնապես արդարացվում էր իբրև վերոհիշյալ

---

համագործակցության նպատակն էր ստեղծել պայմաններ ներդաշնակ զարգացման ու տնտեսական բարգավաճման համար: Տե՛ս <http://www.eurocaucasus.org/am/about.html#sthash.GAMZis2Q.dpuf>

<sup>34</sup> Տե՛ս Բ նպաստ փոխգործակցության խթանման [http://www.hhpress.am/index.php?sub=hodv&hodv=20150919\\_19&flag=am](http://www.hhpress.am/index.php?sub=hodv&hodv=20150919_19&flag=am)

<sup>35</sup> Տե՛ս Joint Declaration of the Eastern Partnership Summit, Warsaw, 29-30 September, 2011, P. 7.

<sup>36</sup> Տե՛ս Արևելյան գործընկերության Քաղաքացիական հասարակության ֆորումի կայքէջ <http://eap-csf.eu/en/about-eap-csf/>

օլիգարխիական խաղերի նախապատրաստական աշխատանքների հետ կապված ծանրաբեռնվածությամբ<sup>37</sup>: Նույն այս գազաթնաժողովում ադրբեջանական պատվիրակությունը առարկություններ ներկայացրեց Հոչակագրի այն կետերին, որոնք վերաբերում էին Մինսկի խմբին աջակցությանը և համանախագահների ջանքերին: Ադրբեջանի արտգործնախարարը լքեց քննարկումը և անընդհատ ձգձգում, խոչընդոտում էր հոչակագրի ընդունումը՝ պահանջելով այնտեղ ներառել նաև Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ դրույթներ<sup>38</sup>:

Ակնհայտ է, որ ԱլԳ երկրներում հասարակական կազմակերպությունները բավական մասնատված են և թույլ: Քաղաքագետ Գ. Գրոմադսկին առանձնացնում է ԱլԳ-ի համար յոթ լուրջ մարտահրավերներ: Դրանցից մեկը քաղաքացիական հասարակության ուժեղացումն է: Գործընկեր երկրներից շատերը ընդդիմանում են էին քաղաքացիական հասարակության ակտիվացման և ԵՄ-ի հետ փոխհարաբերություններում վերջիններիս ընդգրկման գաղափարին: Մյուս կողմից քաղաքացիական հասարակությունն ԱլԳ երկրներից շատերում դեռ նոր է ձևավորվում, մյուսներում թույլ է, մասնատված, շատ դեպքերում՝ իշխանություններից կախվածության մեջ, որոնք ավելի շատ հետաքրքրված են իրենց ջանքերի համար ֆինանսավորում գտնելու, քան կոնկրետ քայլեր կատարելու խնդրով: Ոչ կառավարական կազմակերպությունները (Non-governmental Organization) անվանվում են Կառավարական ոչ կառավարական կազմակերպություններ (Governmental Non-governmental Organization)<sup>39</sup>:

Պետք է նշել ավելի քան կարևոր մեկ հանգամանք ևս՝ Ռուսաստանի դերն ու վերաբերմունքը Արևելյան գործընկերության նկատմամբ: 2008 թ. ԱլԳ մեկնարկը համընկավ ռուս-վրացական հակամարտության հետ, ինչի նպաստեց ԱլԳ-ի հակառուսական ուղղվածության վերաբերյալ կարծիքի ձևավորմանը: Մինչդեռ ռուս-վրացական հակամարտության ժամանակ ԵՄ-ն կառուցողական մոտեցում ցուցաբերեց, և վերջինիս ակտիվ միջնորդությամբ կազմվեցին Սարկոզի-Մեդվեդև պլանները: Ռուսաստանում սկզբնապես թերահավատորեն էին վերաբերում ԱլԳ ապագային և արդյունավետությանը: Թեև պետք է նշել, որ ի սկզբանե ԱլԳ-ի որոշ քաղաքացիներ կարող էին լրջորեն հակասել Ռուսաստանի տարածաշրջանային շահերին. ԵՄ-ի հետ ասոցիացում, ազատ առևտրի գոտու ստեղծում, Էներգետիկ համագործակցություն, վիզաների ազատականացում և այլ խնդրահարույց

<sup>37</sup> Տե՛ս Փախուստ Ռիզայից [http://www.hhpress.am/index.php?sub\\_hodv&hody=201505234&flag=am](http://www.hhpress.am/index.php?sub_hodv&hody=201505234&flag=am)

<sup>38</sup> Տե՛ս Հայաստանի ԱԳ նախարար. Ադրբեջանը ևս մեկ անգամ հայտնվեց մեկուսացման մեջ, <http://news.am/arm/news/268116.html>

<sup>39</sup> Տե՛ս Gromadzki G. An Urgent Challenge for Today's Europe: The Eastern Partnership (International Politics and Society, 3/2011, p. 22).

հարցեր<sup>40</sup>: Բացի այդ, 2003 թ. Ռուսաստանի և ԵՄ-ի միջև ստեղծվել էին համագործակցության չորս ուղղություններ, իսկ 2005 թ. յուրաքանչյուր ուղղության համար ստորագրվել էին «ճանապարհային քարտեզներ»: Մասնավորապես այստեղ կարևորվում էր նաև հետխորհրդային տարածքում ինտեգրման գործընթացներում համագործակցության խնդիրը, որը ևս պետք է հաշվի առնվեր<sup>41</sup>: Պատահական չէր, որ 2009 թ. մայիսին Խաբարովսկում կայացած ԵՄ-Ռուսաստան գագաթնաժողովում ՌԴ նախագահ Դ. Մեդվեդևը նշում էր, որ որոշ երկրներ փորձում են Արևելյան գործընկերությունը վերածել գործընկերության ընդդեմ Ռուսաստանի<sup>42</sup>:

Միննույն ժամանակ ռուսական կողմը նշում էր, որ ոչ մի համագործակցություն հնարավոր չէ հաջողություն ունենա, եթե այն չի ներառում Ռուսաստանի Դաշնությունը, որն իր եզակի աշխարհագրական և տնտեսական դիրքով կապում է բոլոր վեց երկրները<sup>43</sup>: Սա ակնհայտորեն դրսևորվեց 2013 թ. աշնանը Վիլնյուսի գագաթնաժողովից հետո ծագած ուկրաինական ճգնաժամի ժամանակ, որը վերածվեց քաղաքացիական պատերազմի՝ դառնալով մարդկային ու նյութական կորուստների պատճառ:

Ամփոփելով, նշենք, որ ԱլԳ երկրների և ԵՄ-ի միջև երկկողմանի հարաբերություններում արձանագրվեցին նկատելի ձեռքբերումներ գրեթե բոլոր ոլորտներում: Մինչդեռ բազմակողմ համագործակցությանն ուղղված նախաձեռնությունները հեռու են արդյունավետ լինելուց՝ պայմանավորված մի շարք գործոններով. ԱլԳ երկրներն ունեն բավական տարբեր քաղաքական և տնտեսական կառույց, պետականության կայացման և ԵՄ-ի հետ հարաբերությունների վերաբերյալ բազմաբնույթ տեսլականներ: Կարևորագույն հարցերից մեկը Ռուսաստանի, ԵՄ-ի և ԱլԳ երկրների հարաբերությունների խնդիրն է: Ոչ պակաս կարևոր են նաև ԵՄ-ում կատարվող տեղաշարժերը՝ մասնավորապես Եվրոպական խորհրդարանի ընտրություններում եվրոթերահավատների հաղթանակը, ԵՄ-ի կազմից դուրս գալու վերաբերյալ Մեծ Բրիտանիայում հանրաքվեի արդյունքները, ինչպես նաև միգրացիոն ճգնաժամը: Այս ամենի համատեքստում ԱլԳ շրջանակներում զարգացումները կարող են դանդաղել:

<sup>40</sup> Słó u Zagorski A. *Eastern Partnership from the Russian Perspective (International Politics and Society, 3/2011, p. 41).*

<sup>41</sup> Słó u *Европейская интеграция, под ред. О. Буториной, М., 2011, с. 563:*

<sup>42</sup> Słó u *ЕС отвергает критику Россией Энергетической хартии, [http://www.bbc.com/russian/russia/2009/05/090522\\_summit\\_khabarovsk\\_results.shtml](http://www.bbc.com/russian/russia/2009/05/090522_summit_khabarovsk_results.shtml)*

<sup>43</sup> Słó u Zagorski A. *Eastern Partnership from the Russian Perspective, p. 45.*

**ИНИЦИАТИВА «ВОСТОЧНОЕ ПАРТНЕРСТВО» И ГОСУДАРСТВА ЮЖНОГО  
КАВКАЗА****АБРАМЯН Г. М., ЗОХРАБЯН Э. Л, ТЕТЕЯН А. А.**

## Резюме

В 2008 г. Европейский Союз представил новую инициативу – «Восточное Партнерство», в которое входили шесть государств – Армения, Грузия, Азербайджан, Украина, Беларусь и Молдова. Главной задачей ВП было создание предпосылок для ускорения политической ассоциации и экономической интеграции между Евросоюзом и странами - партнерами. В рамках ВП планировалось развитие как двусторонних, так и многосторонних отношений. Особо отмечалась роль регионального сотрудничества между этими шестью странами. В этом контексте были созданы четыре платформы. Парламентская ассамблея Евронест, а также Конференция региональных и местных властей ВП должны были способствовать активизации связей между этими государствами.

**«EASTERN PARTNERSHIP» INITIATIVE AND SOUTH CAUCASIAN STATES****H. ABRAHAMYAN, E. ZOHRABYAN, A. TETEYAN**

## Abstract

In 2008 European Union presented new initiative of Eastern Partnership (EP) with the participation of six states - Armenia, Georgia, Azerbaijan, Ukraine, Belarus, Moldova. The main goal of the EP was to create conditions to accelerate political association and further economic integration between the European Union and interested partner countries. Bilateral and multilateral ties between the EU and the partner counties were intended to develop in the scopes of the EP. The role of regional cooperation between this states themselves was emphasized within this initiative. In this context four platforms were established. The Euronest Parliamentary Assembly and Conference of the Regional and Local Authorities for the Eastern Partnership also had to contribute to the activization of this ties.